№ 9 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 16 — 1901 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 16 № 9

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ **1901** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսվանը՝ 9 ր., ինն եւ ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա եւ Բարօնակայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու քաղաքականութիւն. Զուզեպպէ Վերդի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կառավարչական հաղորդագրութիւն. Մամուլ. Զը կան մեղանում քարոզիչներ. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԵՐԿՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր հասարակութեան մէջ դուք միշտ կը հանդիպէք մի զարմանալի հակասութեան, մի աչք ծակող երկուորութեան։ Ձեր առաջ կանգնած մարդը միաժամանակ երկու հայեացք ունի ամեն մի երեւոյթի մասին։ Իր անձի, իր թուլութիւնների վերաբերութեամբ նա վերին աստիճանի նեղող է եւ լաւատես, իսկ ուրիշների վերաբերութեամբ վերին աստիճանի պահանջող եւ վատատես։ Իր հասարակութեան, իր համայնքի, իր ազգի վերաբերութեամբ նա ունի բոլորովին ուրիշ չափ, քան ուրիշ հասարակութեան եւ ազգի վերաբերութեամբ։ Ուրիշները չը պէտք է ինձ հարստահարեն, հալածեն, ատեն, իսկ ես կարող եմ նոյնն անել այդ ուրիշների վերաբերութեամբ։ Ուրիշ ազգերի մէջ մենք հարկաւոր ենք գտնում անխնայ քննադատութիւն եւ համարում ենք մեծ տխմարութիւն այն հանգամանքը, որ մարդիկ զանցառու են դէպի իրանց գործիչը. բայց մեզանում մենք անխոհեմութիւն ենք անուանում գործիչների քննադատութիւնը եւ այն, երբ իրերը մկրտում ենք իրանց իսկական անունով։

Ամեն անգամ, երբ մենք սկսում ենք բանալ մեր հասարակական վէրքերը, հանդիսատես ենք դառնում մի օտարոտի երեւոյթի։ Մարդիկ վրդովվում եւ զայրանում են այն բանից, որին նրանք պէտք է ծափահարէին, եթէ մենք հետեւելու լինէինք նրանց ընդհանուր հայեացքներին ուրիշ ազգերի վերաբերմամբ։ Այն անձինք, որոնք վրդովվում են մեր մերկացումներից, նոյն ոյժով, գուցէ եւ աւելի սաստիկ կերպով, վրդովվում են, երբ տեսնում են ուրիշ ազգերի մէջ սահմանափակ մարդկանց, որոնք վնասակար են համարում քննադատութիւնը։

Դժբաղդաբար, մաքի այդ հակասութիւնը, երկդէմ այդ դատողութիւնը, երկուստեղ քաղաքականութիւնը շատ տարածված է մեր նոյն իսկ կրթված դասակարգի մէջ եւ պատճառ է դառնում շատ թիւրիմացութիւնների մեր հասարակական կեանքի մէջ։

ԶՈՒԶԷՊԷ ՎԵՐԴԻ

—

Հեռագիրը երէկ գուժեց Միլանից, որ իտալական հռչակաւոր կոմպոզիտոր Վերդի վախճանվեց ուղեղային կաթուածից։ Վերդի ծնվեց 1813 թ-ին, ուրեմն նա 88 տարեկան էր։ Վերդիի հայրենի քաղաքի՝ Բուսսէտոի ժուռնիցիպալիտէտը եւ մի մասնաւոր անձն, տեսնելով Վերդիի երաժշտական խոշոր ընդունակութիւնները, միջոցներ տուեցին նրան գնալ Միլան, այնտեղի կոնսէրվատորիան մտնելու համար։ Սակայն նա այնտեղ չընդունվեց եւ սկսեց պարապել «La Scala» օպէրային թատրոնի կոմպանիատոր Լավինիի մօտ, որի ղեկավարութեամբ նա գրեց բազմաթիւ մանր հեղինակութիւններ, որոնք առանց հրատարակութեան մնացին։

Վերդիի «Un Giorno di regno» առաջին օպէրան, որ նա գրեց 1840 թ-ին, չարդարացրեց կոմպոզիտորի սպասելիքները։ Հետեւեալ երեք օպէրաները՝ «Նաբուգոդոնոսոր» (1842 թ.), «Լոմբարդներ» (1843 թ.) եւ «Էրնանի» (1844 թ.) ստիպեցին խօսել Վերդիի մասին։ Նրա անունը յայտնի դարձաւ. բայց յետոյ նա մի շարք անաջողութիւններ ունեցաւ. Նրա յօրինած մի շարք օպէրաները անաջողութեան դատապարտվեցին, իսկ նրա «Մակբէտ» եւ «Luisa Miller» օպէրաները միջակ աջողութիւն ունեցան։ «Ռիգոլէտտոյից», որ Վերդիի ամենալաւ օպէրաներից է, սկսվում է նրա կոմպոզիտորական գործունէութեան փառաւոր շրջանը։ «Տրուբադուր» եւ ապա «Տրավիատա» օպէրաները շատ աչքի ընկնող դարձրին Վերդիին եւ սիրելի օպէրաներ դարձան Իտալիայում եւ ուրիշ երկրներում։ «Սիցիլիական երեկոն» (1855) եւ «Սիմոն Բոկկանէգրա» (1856) ստիպեցին Վերդիին յիշել անաջողութիւնների նախկին ժամանակը, բայց «Բալ-մասկարադ» օպէրան (1858) կրկին մեծ աջողութիւն ունեցաւ։ Ապա մի քանի աննշան գրուածքներից յետոյ, վերին աստիճանի ֆուրոր գործեց նրա «Աիդա» օպէրան։ Այդ օպէրան առաջին անգամ դրվեց Կայրէի օպէրային բեմի վրա, որի համար Վերդին գրել էր խէդիվ Իզմայիլ-փաշայի առաջարկութեամբ։ Այդ օպէրան, որ ահագին աջողութիւն ունեցաւ առաջին ներկայացման ժամանակ, ամեն տեղ էլ ունենում էր նոյն աջողութիւնը։ Ուրեմն Վերդին քան եւ չորս օպէրայով հասաւ իր փառքի գագաթնակէտին։

«Աիդա» օպէրայից յետոյ Վերդիի կոմպոզիտորական գործունէութիւնը կորցնում է իր բեղմնաւորութիւնը։ 1877 թ-ին Վերդին ասարտեց իր «Ռէքվիէմը», որ նա յօրինեց ի յիշատակ Մանցոնիի, իսկ 1887 թ-ին նա գրեց «Օտէլլո» օպէրան։ Բացի այդ խոշոր գրուածքներից, Վերդին գրեց 12 բովանդակներ, մի քանի երգեցողական հատուածներ եւ լարային կվարտէտներ։ Կոմպոզիտորական եռանդուն գործունէութեան տարիները Վերդին մեծ արագութեամբ էր գրում օպէրաները, եւ շատ անգամ այդ հանգամանքը վնասում էր նրա մի քանի գրուածքների աջողութեանը, բայց այն օպէրաները, որոնց վրա Վերդին աւելի շատ ժամանակ էր գործ դնում, կազմեցին կոմպոզիտորի փառքը։ Վերդին պատկանում է մեր ժամանակի նշանաւոր մելոդիստների թւին։

Քառասնական թուականներին քիչ-քիչ ըսկսվեց վագնէրական շարժումը երաժշտութեան մէջ։ Այդ շարժումը վերջը ահագին չափեր ընդունեց։ Երաժշտութեան մէջ սկսված նոր հոսանքը չէր կարող ազդեցութիւն չունենալ Վերդիի վրա, որպէս մի մարդու վրա, որը սաստիկ սիրում է իր արուեստը։ «Աիդայի» մէջ Վերդին մեծ շնորհքով կարողացաւ միացնել իր երգեցիկ, զօրեղ տաղանդը վագնէրական տենդենցիաների ակնարկների հետ եւ իսկապէս այդ օպերայի մէջ նա գտաւ այն միջին ճանապարհը, որի վրա նա պէտք է կանգ առնէր։ Սակայն «Օտէլլո» օպէրայի մէջ վագնէրական սկզբունքները յաղթող հանդիսացան մելոդիական տաղանդի վրա։ բայց Վերդիին չէ կարելի Վագնէրի շատ խիստ հետեւող համարել։ Մեծ մասամբ Վերդին ընտրում էր աջող սիւժէտներ՝ Վիկտոր Հիւգոյի, Շիլլէրի եւ Շէքսպիրի գրուածքներից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Правительстенный Вѣстникъ»-ում տպված է հետեւեալը։ Դեռ անցեալ տարվայ յունիս ամսին մի քանի բարձրագոյն դպրոցների ուսանողների գաղտնի կազմակերպութիւններ Օդէսայում «համաուսանողական ժողով» էին դումարել, որին մասնակցել էին պատգամաւորներ այդ կազմակերպութիւններից «ամբողջ ռուս ուսանողութեան» գործողութիւնների համար միակերպ ծրագիր մշակելու նպատակով։ Նիստերից մէկի ժամանակ ոստիկանութիւնը ձերբակալեց «պատգամաւորներին» եւ խլեց նրանց ձեռքից ժողովները գտնված թղթերը։ Այդ թղթերը պարունակում էին, ի միջի այլոց, տեղեկութիւններ արգելված ուսանողական ընկերութիւնների կազմակերպութեան, նրանց քանակական կազմի եւ նրանց ընտրած նպատակների մասին, եւ, բացի այդ, նրանց ապագայ գործունէութեան ծրագիրները եւ նախագիծ, որով առաջարկվում էր միացնել այդ ընկերութիւնները, հիմք դնելով այնպիսի կենտրոնական օրգանի, որի պաշտօնը լիներ որոշ դէպքերում ղեկավարել ուսանողների գործողութիւնները ցանկալի ուղղութեամբ։ Այդ ծրագիրների եւ նախագծի մէջ, բացի յանցաւոր քաղաքական նպատակներից, որոնք, մի քանի թղթերի ասելով, պէտք է ծածուկ պահվեն ուսանողների մեծամասնութիւնից այն պատճառով, որ «մասսան վախենում է ամեն տեսակ քաղաքական ձգտումներից», ի միջի այլոց, իբր գործողութեան նպատակ է առաջարկված ուսանողական կազմակերպութիւնների համար (որոնք, նոյն թղթերի վկայութեամբ, բարձրագոյն դպրոցների ուսանողութեան փոքրամասնութիւնն են միայն ներփակում իրանց մէջ) արտայայտել ամեն տեսակ բողոքներ համալսարանական, հասարակական եւ քաղաքական կեանքի երեւոյթների եւ ուսանողական շարժումների կազմակերպութեան առիթով։ Թէպէտ, ինչպէս ասված է, համաժողովի մասնակիցները ձերբակալվեցին, բայց ներկայ ուսումնական տարվայ սկզբից բարձրագոյն դպրոցներից շատերում սկսեցին արտայայտվել նրանց որոշած գործողութիւնների ծրագիրը իրագործելու յամառ փորձեր, մասնաւորապէս իբր աղմկալից բողոքներ եւ խառնակութիւններ այլ եւ այլ պատրուակներով, որոնցից ոչ մէկը ոչ մի կապ չունէր տրված դպրոցի հետ։ Ամենից սաստկութեամբ արտայայտվեցին այդ փորձերը Կիեւի ս. Վլադիմիրի համալսարանում, ուր նրանք դեկտեմբերի սկզբում վերջացան մի աղմկալից համախմբումով, որ վճռեց դադարեցնել պարապմունքները ձմեռային կիսամեակից յետոյ, եթէ բաւարարութիւն չը տրվի ուսանողների պահանջներին։ Ցուզմունքը Կիեւի համալսարանի ուսանողների մէջ սկսվեց հոկտեմբեր ամսին։ Իբր սկզբնական առիթ այդ յուզմունքին ծառայեցին դասախօսութիւնները մի պրոֆէսորի, որ, փոխարինելով մի ուրիշ, արձակուրդով արտասահման գնացած պրոֆէսորի, ֆակուլտէտի որոշմամբ ստանձնել էր նրա առարկայի դասախօսումը։ Դժգոհ մնալով դասախօսների այդ ժամանակաւոր փոխարինութեամբ, ուսանողները սկսեցին յուզվել, խօսք կապել, որ չը յաճախեն իրանց չը ցանկացած դասախօսի լսարանը, եւ համախմբումներ կազմել ուրիշ դասախօս նշանակել տալու նպատակով։ Զը նայելով այն միջոցներին, որ գործ էին դնում ուսանողներին խելքի բերելու համար ֆակուլտէտի դէկանը եւ համալսարանի քարտուղարը, տեսչութիւնը եւ ռէկտորը, յուզմունքը, քանի գնում, սաստկանում էր եւ հոկտեմբերի վերջին սկսեց արտայայտվել աղմկալից համախմբումներով եւ անթոյլատրելի ցոյցերով, որոնց արդէն մասնակցում էին նաեւ ուրիշ կուրսերի եւ նոյն իսկ ուրիշ բաժանմունքների ուսանողներ։

(Կը շարունակվի)

ՄԱՄՈՒԼ

—

Մեծ քաղաքները, կրթված հասարակութիւնները շատ անգամ պիտի օրինակ վերցնեն փոքրիկ, յետ ընկած քաղաքներից, նոյն իսկ գիւղերից։ Այսպիսի մի օրինակ հանդիսանում է ռուս-թիւրքական սահմանի վրա կորած Կաղզուանը։ Այդ փոքրիկ քաղաքն էր, որ բաւական ազդու օրինակով ցոյց տուեց թէ աղաները, եթէ կամենում են, կարող են բարութիւններ անել, բայց իրաւունք չունեն բռնանալ հասարակութեան վրա, հրամաններ տալ նրան։ Այդ դասը, որ տուեց Կաղզուանը իր մի «բարերարին», բաւական յայտնի է մեր ընթերցողներին. Կաղզուանից գրված թղթակցութիւնները, հերքումները շատ պարզեցին այն բոլոր ոտնձգութիւններն ու կրքերը, որոնք բոլորված էին եկեղեցու շինութեան գործի շուրջը։ Ամենաչնաւորը, համակրելին այդ գործի մէջ՝ ժողովրդի գիտակցական գործունէութիւնն էր։ Այս տեսակէտից էլ նայում է գործին Կ. Պոլսի «Մասիս» շաբաթաթերթը, որ, ի դէպ ասած, նոր սկսեց հրատարակվել՝ առժամանակայ դադարից յետոյ։ Նկարագրելով բարերարին, նրա անցեալը, նրա արարքները, թիւրքահայ շաբաթաթերթը այսպիսի խորհրդածութիւններ է անում.

Կաղզուանցիներու այս ընթացքը աւելորդ է ըսել թէ որչափ գովելի ու գեղեցիկ օրինակ մը կընծայէ մեզ ամենուս. այդ ափ մը ժողովուրդը՝ որ կարծես զարգացման շատ բարձր վիճակի մը մէջ ալ չի գտնուիր, այդ իրողութեամբ ցոյց կու տայ այն տեսակ ամուր ու լաւ կազմուած նկարագիր մը՝ որուն նմանօրինակ պարագաներու մէջ բնաւ չենք հանդիպած շատ աւելի բազմաթիւ, շատ աւելի զարգացած ու հարուստ համայնքներու մէջ։

Խնդիրը մասնաւորելով մանաւանդ մեզի, թրքահայերուս համար, պիտի տեսնենք թէ որչափ պէտք ունինք ատոր կէս օրինակներու, գոնէ բարեփոխելու համար մեր գնահատման այն կերպը՝ որով «բարեգործի» համբաւ չնորհած ենք հանդիպած առաջին մարդուն, առանց իսկ անոր անցեալին նկատմամբ պզտիկ քննութիւն մը կատարած ըլլալու։ Թողլով մեռած գացած այն կարգ մը անանուն մարդիկը՝ որոնք ապրած տեսնելն

ամեն աղտոտութեան եւ գձձութեան մէջ թաղուելէ ետքը մահուան օրերնին իսկ չողչողուն ոսկիներու կոյտի մը չնորհիւ մաքրուած են իրենց անցեալէն եւ ամբողջ ազգի մը ալ երախտապարտութիւնը ապահոված, պիտի տեսնենք որ կեանքի մէջ անհամար Ջանփոլատեաններ կը վիտան մեր շուրջը, ու կը վիտան այնչափ, որչափ կարելի չէ երեւակայել. անոնց մէջ կան որ ապագայ կտակարարներ են, միմիայն բերանացի խոստումով մը բարերարի համբաւը ապահոված իրենց, եւ կան որ ազգէն շորթուած գումար մը, կամ ազգէն շորթուած աւելի մեծ գումարի մը մէկ մասը կրկին ազգին թողով կը փառաւորուին։

Ու պէտք կայ ըսելու թէ բոլոր այս Ջանփոլատեանները, բոլոր այդ ապագայ կտակարարները, այդ շորթուած դրամի մը մէկ մասը վերադարձնելու չափ վեհանձն եղողները իբր «բարեգործ» կը դաւանուին մեր մէջ, եւ այդ տիտղոսին իսկ չնորհիւ անխոստովանելի շահագործման մը առարկայ կը դարձնեն իրենց յանձնուած ո եւ է պաշտօն մը, ո եւ է գործ մը. միմիայն դիրքը՝ զոր այդ տիտղոսը տուած է իրենց, կը բաւէ արդէն. եւ որչափ ատեն աս ասանկ մնայ, այնչափ կը լենայ իրենց քսակը, այնչափ կաւելնայ իրենց հարստութիւնը. նոյն իսկ եթէ իրապէս դրամ ալ տուած ըլլան, մէկ երկու տասնեակ տարիներու ընթացքը մը կը բաւէ իրենց, տուածնուն տասնապատիկը, քսանապատիկը գանձելու, շահագործելով այդ դիրքը եւ այն համարումը որ չնորհուած է իրենց, եւ այն տեսակ մը միջոցներով՝ որոնք միմիայն պատուաւոր մարդոց կողմէ անխոստովանելի, այպանելի եւ ապօրէն կը նկատուին։

Բոլոր ասոնք աչքի առջեւ ունենալով, կարժէ որ օգտուինք կաղզուանցիներու տուած օրինակէն։

Այդ օրինակը իրաւ է որ շատ վարէն կու գայ, եւ այն տեսակ ալ մարդոց կողմէ՝ որոնք տգիտութեան մէջ կը լողան, բայց վերջապէս աքանչելի օրինակ մըն է համեմատապէս շատ աւելի զարգացած հայանքներու, ինչպէս է մերինը։

Գեղեցիկ օրինակներ վերցնելը, թէկուզ հէնց տգէտ ու խեղճ տեղերից, մեղք չէ...

ՉԸ ԿԱՆ ՄԵԶԱՆՈՒՄ ՔԱՐՈԶԻՉՆԵՐ

—

Ուրբաթ երեկոյ, յունվարի 5-ին, Նորնախիջեւանի ս. Լուսաւորիչ աւագ եկեղեցին լիքն է. մեր ժողովուրդը չէ սիրում յաճախել ուրիշ եկեղեցիներ։ Տեղ չը կայ ասեղ գցելու։ Քարոզում է պատարագիչ վարդապետը՝ հայր Մուշէն։ Քրիստոսի ծնունդը մի գեղեցիկ, հարուստ, լաւ նիւթ է քարոզի համար։ 1901 տարի է, որ աշխարհ եկած է մեր Փրկիչը, ամեն տարի մենք կատարում ենք եկեղեցում այդ սուրբ խորհուրդը, ամեն տարի իրար ասում ենք «չնորհաւոր ծնունդ եւ մըկըրտութիւն», բայց այդ լոկ բառեր են մեզ համար, մեր սրտերը մնում են կոչտացած, քարացած եւ մենք կարծես դեռ հեթանոսներ ենք, կարծես դ'ռ սպասում ենք եւ Քրիստոսի ծընունդին եւ աշխարհի փրկութեանը... Ահա ինչ էր ցանկանում ասել վարդապետը. մենք ասում ենք ցանկանում էր, որովհետեւ իսկապէս բոլորովին ուրիշ բան ասեց քարոզիչը։

«1901 անգամ ծնվում է Քրիստոսը, բակսեց նա, այն Քրիստոսը, որ»... Այստեղ հռետորական ձեւով նկարագրելով Փրկչի վարդապետութիւնը, քարոզիչը շարունակում է՝ «ամեն տարի ծնվում է Քրիստոս»... Ամեն տարի ծնվում է Քրիստոս...

Մենք յիշում ենք մեր Մեծ Սալայի գիւղացուն, որը սուգի գիշերը լսելով Քրիստոսի չարչարանքը, բացականչում է՝ «Օրհնած, հերու բռնել էին, բռնել էին. աս տարի ալ ինչու ընկար ձեռքերը...»

Մենք չունենք քարոզիչներ, թէպէտ եւ շատ ծարաւ ենք քարոզների։ Խրիմեան հայրիկները, Խորէն Ստեփանէները, Ամբրոսիոսները, Նարպէյները եւ Մամբրէները մեզանում եզակի եւ բացառիկ երեւոյթներ են։ Եւ եթէ մենք չունենք տաղանդ, գոնէ սիրենք աշխատանք։ Աշխատենք պարզ խօսելու, աշխատենք ժողովրդին հասկանալի, մատչելի խօսքերով բանալ նրա կուրացած աչքերը եւ կակղացնել նրա քարացած սիրտը։ Բայց ուրիշի սիրտը վառելու համար, նախ խօսողը պիտի ոգեւորէ, վառէ իր սիրտը։ Պէտք է աշխատել գրել քարոզը, սիրտել եւ ժամանակին կը գայ հմտութիւնը եւ քարոզիչը հեշտ կը կարողանայ արդէն առանց պատրաստութեան քարոզել։ Կպցնել իրար տասը ածականներ—դա չէ նշանակում լաւ խօսել։ Երբ մեր ժողովուրդը լսում է քարոզչի բերանից այնպիսի հերետիկոսութիւն թէ Քրիստոս ծնվում է ամեն տարի, նա ասում է «աղէկ որ կարճ կապեց», այսինքն չուտ վերջացրեց, եւ միւս անգամ, քարոզիչը դեռ բերանը չը բացած, ժողովուրդը հեռանում է եկեղեցուց։

Ահա ինչ կը նշանակէ վատ քարոզի ազդեցութիւնը,—նա հեռացնում է ծխականին եկեղեցուց։

Եթէ մեր հոգեւորականները նախ պատրաստվէին խօսելու, չը խնայէին աշխատանք, լաւ մտածէին եւ մարսէին այն, ինչ որ ցանկանում են ասել, մենք կունենայինք քարոզիչներ։ Չէ՞ որ ինքը Դեմոսթէնը աշխատանքով միայն եղաւ Դեմոսթէն։

Երկու անգամ չեշտելուց յետոյ, որ ամեն տարի ծնվում է Քրիստոս, վարդապետը մատնացոյց արեց, որ մեր սրտերում բուն է դրել չար նախանձը եւ յանկարծ վերջացրեց, թէ մեզ համար դեռ Քրիստոս չէ ծնված։ Մթթէ։

Մթթէ մենք հրէաներ ենք, որոնք դեռ սպասում են Մեսսիայի գալուն։ Ոչ. նոյն իսկ հրէաների համար ծնվել է Քրիստոս սրանից 1901 տարի առաջ։ Բայց ճշմարիտ է, որ մեր սրտերը պատռած քարեր են եւ գուցէ գլխաւոր պատճառը այն է, որ մենք շատ քիչ ենք տեսած լաւ, բարի օրինակ, կամ ազդու, գեղեցիկ խօսք մեր հոգեւորականներից։

Մինչդեռ Մուշէ վարդապետը շարունակում էր իր քարոզը, անցեալի պատկերը գալիս էր իմ առաջ, ես յիշում էի Լազարեան ճեմարանը եւ Մոսկվայի եկեղեցին մեծ պասին։ Երկու քահանաներից մինը խիստ էր եւ խոստովանելու ժամանակ ամեն մէկիցս հարցնում էր, ինչ մեղք ենք գործել։ Մենք գերադասում էինք միւս քահանային, մանում էինք խուցը երեքչորս հոգի, չոքում էինք, սկսվում էր խոստովանքը։ Բարի քահանան հարկաւոր էր համարում միշտ մի փոքր քարոզ ասել. ողջ աւետարանից նա սիրել էր միայն, չը գիտեմ ինչու, մէկ կտոր—տասը կուսանաց առակը, որ պատմում էր մեզ Թիֆլիսի աղաւաղած բարբառով... «Գիտում էք...էն վուր ինչպէս... տասը կուսանանք... հինգը իմաստուն, հինգը... յիմար»...

Մենք բոլորս լսել էինք այդ առակը նախակրթարանում, առաջին եւ երկրորդ դասարաններում։ Երրորդ դասատան աշակերտներ էինք արդէն, երբ երեք ընկեր մտանք խուցը եւ չոքեցինք։ Խոստովանելուց յետոյ բարի քահանան նոյն ձայնով, նոյն եղանակով, նոյն ոճով սկսում է՝ «Գիտում էք... էն վուր ինչպէս... տասը կուսանանք... հինգը»... բայց մէկը մեզանից չէ կարողանում զսպել ծիծաղը...

Քահանան մնում է շուարած։ Մենք ծիծաղում էինք բոլորս։

—Կուրէք էստէղից, չուն չանվուրդիք... բացականչում է նա, եւ մենք այդ տարի հաղորդվում ենք չը խոստովանած։

Դրանից յետոյ միշտ, երբ մենք լսում ենք անհամ քարոզ, մեզ թւում է, թէ մենք հաղորդվում ենք չը խոստովանած...

Գր. Զալխուշեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Յունվարի 29-ին

Մեր քաղաքային վարչութեան կազմը այս օրերս վերջացնում է իր գործունէութեան ժամանակամիջոցը։ Կարծում ենք, որ անցած գործունէութեան վրա մի թեթեւ ակնարկ գցելու ժամանակն է արդէն։ Այդ գործունէութիւնը, ունենալով իր բացասական կողմերը, պէտք է ասել, ունի նաեւ օգտակար, դրական կողմեր։

Տարիներ առաջ Գանձակի փողոցների ցեխը, նոյն իսկ ամենաառաջնակարգ թաղերում, վերին աստիճանի անտանելի էր։ Առանց քարի ու առանց խճի փողոցներում՝ ցեխը անձրեւների հետ խառնվելով լճանում էր եւ այդպէս մնում օրեր, շաբաթներ, նաեւ ամիսներ՝ համարեա մինչեւ գարնան կէսերը։ Քաղաքային վարչութիւնը ուշք դարձրեց այդ բանի վրա եւ խճեց փողոցները։ Սակայն պէտք է ասել, որ մինչեւ այժմ էլ նախկին անտանելի դրութեան մէջ են գտնվում երկրորդական, խուլ փողոցները։ Վարչութիւնը բարեկարգեց միայն մի-երկու առաջնակարգ փողոցներ։ Առաջներում մթութիւնը, լապտերների բացակայութիւնը եւս անտանելի էր դարձնում երթեւեկութիւնը. իսկ այժմ, չնորհիւ լուսաւորութեան, մասամբ հեշտացել է անցուդարձը։ Սակայն, դժբախտաբար, այդ կէտումն էլ վարչութիւնը հարկ եղածին չափ ուշք չը դարձրեց խուլ փողոցների վրա։ Առաջնակարգ փողոցներում կան բաւարար լուսաւորութիւն, քարած փողոցներ, ձիաքարշ, վերջապէս այնտեղ ապրող մարդիկ կարողութիւն ունեն մութ ժամանակ կառքով տուն գնալ։ Իսկ խուլ փողոցներում այդ ամենից ոչ մէկն էլ չը կայ։ Չէ՞ որ այնտեղ էլ մարդիկ են ապրում...

Քաղաքային դպրոցը տարիներից ի վեր տեղաւորված է նեղ, մութ եւ հակառողջական մի շէնքի մէջ։ Բացի այն, որ ամեն տարի հարիւրաւոր երեխաների՝ տեղ չը լինելու պատճառով, մերժում էին, ընդունածներին գոնէ չէին կարողանում փոքր ի շատէ լաւ պայմանների մէջ պահել։ Եւ շատ հասկանալի է, որ ընդունվում էին մեծ մասամբ նրանք, որոնք կարողանում էին ուսման վարձ տալ, իսկ միւսները՝ աղքատներն ու որբերը ընկնում էին փողոցները, թափառում քաղաքի այս եւ այն խուլ մասերում ու շատ անգամ մեղանչում «մի գողանար» պատուիրանի դէմ։ Դպրոցը, իր գոյութիւնը պահպանելով հասարակութեան միջոցներով, շատ քիչ էր մտածում այդ հասարակութեան խեղճ դասակարգի մասին։ Այսպիսի ցաւալի հանգամանքներում, ուրեմն, երբ գանձակեցի որբը տեղ չէր գտնում միակ քաղաքային դպրոցում, շատ համակրելի է քաղաքային վարչութեան այն քայլը, որով նա սկսել է մի լայն ու ընդարձակ, մաքուր ու առողջապահական տեսակէտից յարմար շէնքի կառուցում։ Շէնքի աւարտումից յետոյ, յոյս ունենք որ՝ մի կողմից մեր մատաղ սերունդի առողջութեան անհրաժեշտ գործը լաւ պայմանների մէջ դրված կը լինի, միւս կողմից՝ որբերն ու անճարներն էլ դպրոցի երես տեսած կը լինեն։

Քաղաքային հիւանդանոցի պահանջը շատ վաղուց էր զգացվում. մի այնպիսի մարդասէր նահանգական քաղաք, որպիսին Գանձակն է, մինչեւ այժմ չունի հիւանդանոց։ Ինչ ասել կուզէ, որ այդ հանգամանքը աւելացնում է մեր քաղաքի մոռացված ու օգնութիւնից զուրկ մեռնողների, առանց այն էլ, մեծ թիւը։ Այժմ արդէն մի հարստի չնորհիւ մեր քաղաքը ունի բաւական յարմար շէնք եւ գործ սկսելու համար բաւարար չափով գումար։ Մնում է, որ քաղաքային գործերի ապագայ վարիչները շուտափոյթ գործադրութեան մէջ դնեն հիւանդանոցի համար յատկացրած շէնքն ու գումարը։ Էլ սպասելու եւ ձգձգելու ժամանակը չէ։

Սրանք եւ սրանց նման մի քանի դրական կողմեր ունի նախկին վարչութեան գործունէութիւնը։ Շատ բան կայ, ի հարկէ, որ չէ արված, չը նայելով, որ ամենայն հեշտութեամբ կարելի էր անել, եթէ բարի ցանկութիւն եւ աշխատասիրութիւն լինէր։ Զարված գործերը, ուրեմն, այսուհետեւ պիտի ծանրանան ապագայ վարչութեան վրա։ Այդ գործերից, մեր կարծիքով, եթէ ոչ առաջինը, գոնէ շատ կարեւորն է քաղաքային էժանագին դրադարան-ընթերցարանի բացումը։ Ճիշդ է, մեր քաղաքում մոտ երկու տարի է ինչ գոյութիւն ունի մի դրադարան-ընթերցարան, սակայն դա իրեւ մի այնպիսի հիմնարկութիւն, որ պահվում է մասնաւոր մարդկանց միջոցներով եւ մասնաւոր մարդկանց ղեկավարութեամբ՝ ունի շատ թերութիւններ։ Տեղական ժողովրդին մատչելի ու տեղական լեզուներով գրված շատ քիչ գրքեր կան։ Եղածներն էլ իրար վրա թափված են անկարգ, առանց հաշարի։ Երբ, օրինակ, որ եւ է հայերէն գիրք էք խնդրում, ձեզ տանում, ցոյց են տալիս հայերէնի փոքրիկ բաժինը եւ ասում. «ընտրեցէք ձեր ցանկացած գիրքը»։ Դուք, որ ծանօթ էք գրքի արտաքինին, որտեղում էք բոպէներով, որտեղում էք ժամերով եւ կամ բոլորովին չէք գտնում, կամ գտնում էք մեծ դժուարութեամբ։ Իսկ եթէ ձեզ ծանօթ չէ գրքի արտաքինը—հատատութիւնը, բարակութիւնը—այն ժամանակ գուցէ եւ չը գտնէք բոլորովին։ Չէ՞ որ քաղաքային վարչութեան ապագայ կազմի վրա ամենից առաջ պիտի ծանրանայ մի կանոնաւոր գրադարան բաց անելու քաղցր պարտականութիւնը։

Ս. Ցակոբեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յունվարի 13-ին Վեհափառ Կաթողիկոսը այցելութիւն գործեց Կովկասի Կառավարչապետ իշխան Գոլիցինին, Կովկասի կառավարչապետի օգնական գեներալ-լէյտենանտ Ֆրեզէին եւ Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար Սվէշինին։

—

Երէկ, երկուշաբթի, յունվարի 15-ին, Ամենայն հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանի անուանակոչութեան տարեդարձի օրը՝ նրան այցելեցին Թիֆլիսի առաջնորդարանում Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ իշխան Գոլիցին, Թիֆլիսի նահանգապետը, հայվաճառականների եւ համքարների ներկայացուցիչները, Ներսիսեան դպրոցի հոգաբարձական եւ ուսուցչական խմբերը, նոյնպէս եւ ուրիշ մասնաւոր անձինք։

—

Կիրակի, յունվարի 13-ին, նշանակված էր «Թիֆլիսի նաւթարդիւնաբերական ընկերութեան» ընդհանուր ժողովը։ Ընկերութեան անդամներ ժողովված էին մեծ թւով, բայց ժողով չը կայացաւ, որովհետեւ ժողովականների մի նշանաւոր մասը չէր համաձայնվում ընթացիկ գործերի դիմել մինչեւ ընկերութեան գործերի ներկայ վարիչները չը ներկայացնեն իրանց գործունէութեան հաշիւը։ Ծագեցին եւ մի քանի ուրիշ առարկութիւններ իրաւունքների վերաբերմամբ։ Ժողովականները անկարող եղան որ եւ է եզրակացութեան գալ, բարձրացաւ անասելի աղմուկ, տեղի ունեցան սուր եւ վիրաւորական յարձակումներ միմեանց հասցէին։ Մօտաւորապէս երեք ժամ ապարդիւն եւ աղմկալի վիճաբանութիւնից յետոյ ժողովականները ստիպված էին ցրվել, առանց պաշտօնապէս սկսելու իրանց նիստը։ Ընկերութեան գործերի ժամանակաւոր վարիչները պէտք է առանձին ուշադրութիւն դարձնեն, որպէս զի թիւրիմացութիւններ առաջացնող առիթների թիւը պակասի, այլապէս այդ ժողովները կը դառնան միայն սկանդալների հանդիսարան։

—

Կիրակի, յունվարի 14-ին, տեղի ունեցաւ Շամախու թեմի առաջնորդ Եսայի արքեպիսկոպոսի Մաղման հանդէսը։ Թաղմանը ներկայ էին Վեհափառ Կաթողիկոսը, Թիֆլիսի առաջնորդը, մի քանի յաջորդներ եւ բազմաթիւ հասարակութիւն։ Թաղումը տեղի ունեցաւ Վանքի բակում։

—

Առաջիկայ կիրակի, յունվարի 21-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի կունենայ «չինական պարահանդէս» յօգուտ Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան։ Ժողովարանի դահլիճը զարդարված կը լինի չինական ձեւով եւ մասնակցող անձինք հագած կը լինեն չինական տարազի հագուստներ։ Երեկոյթի ժամանակ կը պարեն չինական կադրիլ, որ արդէն մի ամիս է պատրաստվում է բալետմէյստեր Զիսկովսկու ղեկավարութեամբ։ Մուտքը 2 ր. 10 կ.։ Յոյս ունենք, որ հասարակութիւնը, ի նկատի առնելով երեկոյթի բարեգործական նպատակը եւ հետաքրքրական ծրագիրը, կայցելէ պարահանդէսը։

—

Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, երկրագործութեան մինիստր Երմոլովի նախագահութեամբ կազմված է մի յանձնաժողով՝ նաւթային գործը Կովկասում ընդլայնելու հարցը քննելու համար։

—

Պետերբուրգից հաղորդում են «Рус. Вѣд.» լրագրին. «Այսօր յունվարի 8-ին, առաւօտեան ժամի 9-ին, յայտնի դարձաւ, որ այրվում է գիտութիւնների ակադէմիան։ Ակադէմիայի շինութեան կտուրից բարձրանում էր թանձր ծուխ։ Հետզհետէ ծուխը ցրվեց եւ երեւաց սաստիկ բոց։ Հրդեհը ծագել էր ակադեմիայի գրադարանում, որտեղ այրվել են, ի միջի այլոց, մի քանի ձեռագրեր, որոնք նշանակութիւն ունեն ռուսական հին պատմութիւն եւ գրականութեան համար։ Հրդեհաշէջները դուրս էին բերում մեծ քանակութեամբ ծխացող գրքեր։ Այրվել են նոյնպէս մի քանի թանգագին շարադրութիւններ բնական գիտութեան վերաբերմամբ։ Հրդեհաշէջների միացած ջանքերով մինչեւ երեկոյեան ժամի 10-ը աջողվեց հանգցնել հրդեհը, թէպէտ եւ շատ գրքեր ու թղթեր շարունակում էին ծխալ։ Այժմ դեռ եւս չէ կարելի ճշգրտութեամբ իմանալ ոչնչացած գրքերի անունները, բայց հրդեհին ներկայ գտնվող ակադեմիկոսներից մի քանիսը ասում էին, թէ ոչընչացել են հազուագիւտ հրատարակութիւններ։

—

Յայտնի իտալացի երգիչ Մազինի այն ասուճան լուրջ հիւանդ է, որ Պետերբուրգի կայսերական թատրոնի վարչութիւնը քանդել է նրա հետ կապած պայմանագիրը։ Մազինի գնալու է հայրենիք։

—

Պատոր Գիլիօտ ստացել է Կրիւգէրից մի նամակ, որի մէջ Տրանսվալի նախագահը խնդրում է նրան հրատարակել լրագիրներում իր եւ Տրանսվալի չնորհակալութիւնը ռուս ժողովրդին, վերջինիս համակրական ցոյցերի եւ օգնութեան համար։

—

Բերլինից հեռագրում են «Новое Время»-ին, թէ լուսաւորութեան առարկաներ պատրաստող «Հէլիոս» ընկերութիւնը սնանկացաւ. գործի ղեկավարները դատվում են զանազան զանցառութիւնների համար։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Վեհափառ Կաթողիկոսի ներկայութեան չնորհիւ,

այս տարվայ Ծննդեան տօնը Ալէքսանդրօպօլի համար անցաւ արտասովոր շքեղութեամբ։ Ճրագալոյցին Վեհափառը իջաւ ս. Աստուածածնի աւագ-եկեղեցին, որտեղ պատարագիչ էր տեղիս փոխանորդ Մատթէոս վարդապետը, երգում էր Արշակ Բրուտեանի քառաձայն խումբը։ Հետեւեալ առաւօտեան, մկրտութեան տօնի օրը, բոլոր քահանաները հաւաքվեցին Աստուածածնի եկեղեցին, որտեղ ներկայութեամբ Վեհափառ Կաթողիկոսի պատարագ մատուցեց գաւազանակիր Կորիւն վարդապետը։ Պատարագից յետոյ կազմվեց մի փառաւոր մեծ թափօր, որի ծայրում, ամպհովանու տակ, կանգնած էր Վեհափառը։ Թափօրը շարժվեց դէպի սուրբ Փրկիչ եկեղեցու դուռը, ուր պատրաստված էր յորդանանը։ Ժողովրդի բազմութիւնը ահագին էր երկաթուղու շնորհիւ, Կարսից եւ այլ տեղերից շատ մարդիկ կային։ Մկրտութեան խորհուրդը անձամբ Վեհափառ Հայրապետը կատարեց։ Թողնվեցին շատ աղաւնիներ, որոնցից մի սպիտակ աղաւնի ուղղակի թռաւ Վեհափառի գիրկը։ Մկրտութեան հանդէսից յետոյ Վեհափառը մեծ բազմութեան անվերջ կեցցէներով վերադարձաւ վեհարան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

—

Պարիզ, յունվարի 12-ին

Որքան իմաստութիւն կը պարունակէ ժողովրդական առածը. «Թշնամիներէդ աւելի բարեկամներէդ վախցիր»։

Արդարեւ մարդ իր թշնամիէն վախնալու պէտք չունի, որովհետեւ անոր դիտաւորութիւններուն տեղեակ՝ թոյլ չենք տար, որ ան մեզի մօտենայ եւ կամ նախապատրաստ ու զինված կը գտնէք մեզի համար ամեն հարուածներուն դէմ. բայց բարեկամը, որուն վրա մեր վստահութիւնը դրած ենք, եւ ուրկէ չարիք չենք սպասեր, կամ ու մեղր լեզուով կուգայ ու մեզի կուտայ մահացու հարուածը։

Այս պարագային մէջ է Ֆրանսան։ Հանրապետութիւնը՝ Մելինի ու Շառլ Դիւպիւիի նախարարութեան տակ, որոց հանրապետական զգացմունքները գաղջ են՝ արթնութեան նշոյլ մը ունէր։ Հանրապետականները այդ երկու նախարարապետներու օրով կռիւի ձգտումներ կը ցուցնէին, ընդդիմութեան ճիգեր մը կը փորձէին, որովհետեւ այդ երկու քաղաքական չիլ մարդերուն մէջ տարտամօրէն կը զգային հանրապետութեան թշնամիներ։

Շիտակը այս երկու աննկարագիր ու առաձգական գիտակցութեամբ մարդերուն վստահութեան չնորհիւ է, որ հանրապետութիւնը ընկղմվեցաւ այն ահաւոր ու խորունկ տագնապին մէջ, ուր իր կեանքը մաղ մնաց վրա տար եւ ուրկէ ամբողջովին ազատված չէ տակաւին. Դրէյֆուսի խնդիրը եղաւ, որ մատանիչ ըրաւ Ֆրանսայի հիւանդագին վիճակը։

Հանրապետութեան երեք գլխաւոր թշնամիները՝ կղերականութիւնը, զինուորականութիւնն ու կեսարականութիւնը, մութին մէջ ուռճացեր ու զօրացեր էին։ Ու քիչ մըն ալ. իրենց ուժով սեղմումին տակ պիտի խեղդէին խեղճ Մարիանը։ Իրաւ է թէ Ֆրանսական հանրապետութիւնը աւելի անուանապէս, քան իրապէս գոյութիւն ունէր։ Կաղ, կոյր ու սապատաւոր՝ անիկա թանգագին էր նորէն ասոնց համար, որոնց ջանքերը կը ձգտեն իրարու աւելի կատարեալ ներդաշնակութեան մը։

Նապոլէօն Բոնապարտի կայսրութիւնը պատճառ եղած էր, որ հանրապետութիւնը վիժի։ Ֆրանսացի այս աշխարհակալը, 89-ի սկզբունքներուն առջեւ թումբ կանգնած էր ու զօրաւոր ձերքով մը ետ մղած՝ ռամկապետական տենչանքներուն հոսանքը։ Իր ամբողջ ճարկութիւնով՝ յաջողեցաւ առաջին հանրապետութեան մէջ մտցնել այնպիսի հոգի մը, որ պիտի չէզոքացնէր անոր թռիչքը ու ամլութեան դատապարտէր անոր բոլոր գործօն ուժերը։ Մեծ յեղափոխութեան ամբողջ գործը կամիտիվէր փոփոխումի մը մէջ, որ աւելի մակերեւոյթային էր, քան իսկական։ Միապետական Ֆրանսան իր խորունկ խաւերուն մէջ անկեղծ կը մնար. արտաքին ձեւը միայն փոխված, ոսկեզօծված էր։ Նախկին հին ուժերը՝ սովորութիւններ, հաստատութիւններ ու բարքեր՝ շարունակելով ներգործել ֆրանսական նոր գիտակցութեան վրա, այդ երկու տարբերու իրար բաղխումը անխուսափելի կը դառնար։ Եւ կռիւ մը կը մղվէր, մոլեգին եւ անդադրում, հին Ֆրանսային ու նոր Ֆրանսային մէջ. առաջինը կռթնելով պատմական աւանդութեան, իսկ երկրորդը՝ ազատ քննութեան ու անկախ բանականութեան վրա։ Հինը՝ մինչեւ այսօր, երեք անգամ յաղթանակ տարաւ նորին վրա ու հանրապետութենէ կայսրութիւն յաջորդական անցքերը ուրիշ բան չեն, բայց եթէ հանգրուանները այդ խուլ կռուին։

Կղերականութիւնը, զոր 89-ին ժողովրդային զայրոյթը իր 18 դարու անխիղճ շահագործումի արդիւնքէն զրկելով՝ վռնդած էր երկրէն, կայսրութեան վերահաստատումին հետ նորէն մուտք գտաւ Ֆրանսա ու աշխատեցաւ իր նախկին դիրքը գրաւել։ Կայսրութիւնը ոչ միայն թոյլատուեցաւ այդ սեւ լեգէօնին, այլ եւ զանոնք քաջալերեց։ Բանակն ու կղերը իր տիրապետութեան ամենէն հաստատուն նեցուկներն էին։ Եթէ բանակը տիրապետողին կը հայթայթէր մարմիններու իշխանութիւնը՝ կղերն ալ կապահովէր հոգիներու հպատակութիւնը։

Իրարու յաջորդող հանրապետութիւնները, հաւասարապէս թոյլ ու անփոյթ գտնվեցան, ձգելով որ կղերականութիւնը արմատ բռնէ երկրին մէջ ու բարգաւաճի։

Դրական փիլիսոփայութիւնը յաջորդած էր տեղական (idéaliste) իմաստասիրութեան ու բանականութիւնը՝ քննադատական կանթեղովը լուսաւորված՝ կրօնական ու բարոյական ստրկութեան կապանքները կը խորտակէր։ Հին ըմբռնումներու աւերակին վրա կը բարձրանար նոր գաղափարներու փառաւոր շէնքը։ Կրօնքը հոգիներու վրա իր առաջուան ահարկու իշխանութիւնը կորուսած ըլլալով՝ կրօնականներու աղետալի ազդեցութենէ վախը ծիծաղելի կը թուէր։ Բայց փորձառութիւնը հակառակը ցոյց տուաւ։ Կղերականները՝ ազատութեան աւանդական ու անհաշտ թշնամիներ՝ չարաչար գործածեցին հանրապետութեան թոյլտութիւնը կամ աւելի ճիշդ՝ հանրապետականներու տկարութիւնը։ Այնպիսի միջոցներով, որ ճիզուիթներու միայն յատուկ են, յաջողեցան անսակայելի ուժ մը ձեռք բերել. 18 դարու միջոցին իրենց դիղած հարստութիւնը մէկ դարու մէջ վերահաստատեցին եւ կրկնապատկեցին ու եռապատկեցին։ Այս պահուս՝ կրօնական միաբանութիւնները (congregation) տասներկու միլիարդ հարստութեան վրա թուխս նըստած են։ Կռիւին ջիղը ունենալով՝ գրեթէ ամբողջ երկրին տէրը դարձան։ Բանակը, ատենակալութիւնը (magistrature) ու կառավարական բոլոր կարեւոր պաշտօնատունները իրենց անձնուէրներով լեցուն էին։ Եւ որովհետեւ հանրապետութիւնը տիպողաբար ամեն վարդապետութեան (dogme) հակառակ է, քանի որ վարդապետութիւնը ազատ քննութեան հետ չէ կարելի հաշտեցնել, կղերականութիւնը համերաշխ է հին Ֆրանսային հետ ու իր ամբողջ ուժովը կաշխատի միապետութեան կամ կայսրութեան վերահաստատումին։ Կրօնական միաբանութիւններէն ասոսմպսիոնիստները իրենց Կրուա (խաչ) անուն թերթով, որ գրեթէ ամեն գաւառի ու քաղաքի մէջ իր ճիւղն ունի ու միլիոններով կը ցրվի, ժողովուրդին ուղղը թունաւորած են. երկրին այն անկիւններուն մէջ, ուր լրագրի գոյութիւնը կանգիտանան, Կրուան մուտք գտած է։ Ասկէ զատ «Լը Պրտի Ժուրնալէն» սկսած մինչեւ «Լիբր Պարոլ» ֆրանսական մամուլը իր մէկ կարեւոր մասին մէջ կղերականութեան գործիքն է։

Սակայն նամակս երկարեցաւ։ Կղերականութեան դէմ սկսված կռիւին մասին խօսքս կը թողնեմ հետեւեալ անգամին։

Տիգրան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ներերս Հռոմում իր առաջին դասախօսութիւնը կարդաց իրաւագիտական փիլիսոփայութեան մասին Ջահէլ պրիվատ-դոցէնտուհի Թէրէզինա Լաբրիօլա։ Լսարանը, միջանցքները եւ համալսարանական բակը ծայրէ ի ծայր լի էին հաստակութեամբ, որ ընդունեց դասախօսուհուն ոգեւորված ցոյցերով։ Մի ուրիշ կին, բժշկութեան դոկտոր Բինա Մօնտի, նոյն օրը կարդաց իր առաջին դասախօսութիւնը Պավիայի համալսարանում անատոմիայից եւ նոյնպէս առիթ տուեց բուռն քաջալերական ցոյցերի։

—Բերլինից «Русск. Вѣд.»-ի լրագրի թղթակիցը հեռագրում է յունվարի 9-ին. «Մկների դիակների հետազօտութիւնը «Pergamon» շրջանաւի վրա Համբուրգում երեւան հանեց ժանտախտ հիւանդութիւն։ Զգուշութեան ամենախիստ միջոցներ են ձեռք առնված։ Շրջանաւի վրա ծառայողները մինչեւ այժմ առողջ են եւ հսկողութեան տակ են գտնվում»։

—«British Medical Journal»-ի ասելով, մի հարուստ եապօնական ընտանիք, Միտզուի ազգանունով, նուիրել է Տօկիում մի ընդարձակ հոսանք հոգաբաժին կանանց համալսարան հիմնելու համար, իսկ երեք ուրիշ անձնաւորութիւններ նուիրել են 24,000 ֆր. անհրաժեշտ շէնքեր կառուցանելու համար։ Շինութեան գործը արագ առաջ է գնում, եւ նոյն իսկ յոյս կայ, որ 1901 թ. գարնան նոր համալսարանը պատրաստ կը լինի։ Ուսանողուհիների պակասութիւն չի զգացվի, որովհետեւ վերջին տարիներս բազմաթիւ խնդիրներ են տրված եապօնուհիների կողմից թոյլ տալ իրանց յաճախել բժշկական ֆակուլտէտի եւ պոլիտեխնիկումի դասախօսութիւններին։

—Գերմանական նացիոնալիստների գլխաւոր ղեկավարներից մէկը, Շէնէբէր, հաղորդեց լրագիրներում, որ այն պատգամաւորները, որոնք ցանկութիւն ունեն աւստրիական ռէյխստագում միանալ «համագերմանական» խմբին, պէտք է ստորագրեն մի յայտարարութիւն, որով նրանք պարտաւորվում են ձգտել միացնելու Աւստրիայի գերմանական նահանգները գերմանական կայսրութեան հետ, մաքառել աւստրիական որ եւ է կառավարութեան դէմ, որը հակառակ կը լինի այդ ձգտումներին, չը տալ հաւատարիմ հպատակութեան երդումներ, քանի որ կառավարութեան ղեկը այդպիսի կառավարութեան ձեռքում կը լինի եւ, վերջապէս, յետ մղել իրանցից բոլոր ոչ-գերմանական տարրերը, ի միջի այլոց, եւ հրէաներին, նոյնպէս եւ հրաժարվել Հռոմից։ Կարծում են, որ նացիոնալիստների այս ծայրայեղութիւնները պառակտումն կը գցեն գերմանական արմատականների կուսակցութեան մէջ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

13 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր առաւօտվանից Պետերբուրգը ընդունեց տօնական կերպարանք. մայրաքաղաքը դիմաւորում էր վերադարձած Նոցա Մեծութիւններին եւ Դուստրներին։ Ճանապարհի ամբողջ երկարութեամբ, սկսած Նիկոլաեվսկի կայարանից Նեվսկի պրոսպէկտով մինչեւ Զմերային պալատը, բոլոր տները զարդարված էին դրօշակներով, կանաչահիւս զարդարանքներով եւ անուանանիշերով։ Իր զարդարանքներով առանձնապէս աչքի էր ընկնում Զնամենսկայա հրապարակը, որտեղ, Նեվսկի պրոսպէկտի առաջ, շինված էր մի գեղեցիկ յաղթական կամար. ներսի կողմից շատ գեղեցիկ զարդարված էր կայարանի դէբարկադէրը, որտեղ, արքայական սենեակների մուտքի առաջ, խփված էր մի չքեղ վրան։ Առաւօտեան, մօտ 8 ժամին, կայարանից Նեվսկի պրոսպէկտով մինչեւ Զմերային պալատը, փողոցի երկու կողմում, շարք-շարք կանգնեցրին զօրքեր եւ զինուորական դպրոցների աշակերտներ։ Ճանապարհի ամբողջ տարածութեան վրա կանգնած էր ժողովրդի խուռն բազմութիւն։ Իններորդ ժամին կայարան եկան ներքին գործերի, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրները, շատ բարձրաստիճան անձինք, քաղաքապետ Կլեյգէլս, նահանգապետը, քաղաքագլուխ Լեվեանով։ Մի քանի րոպէ արքայական դնացքի հասնելուց առաջ եկան Այրի Կայսրուհին, Թագաժառանգը, Մեծ-Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնա եւ քիչ աւելի վաղ—բոլոր Մեծ-Իշխանները եւ Մեծ-Իշխանուհիները, որոնք գտնվում են Պետերբուրգում, Օլդենբուրգեան պրինցը, Լեյխտենբերգեան եւ Մէկլենբուրգ—Սարեվեցկի դուքսերը։ Ուղիղ ժամի 9-ին հասաւ կայսերական դնացքը։ Առաջինը դիմաւորեցին Նոցա Մեծութիւններին Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնա, Նորին Բարձրութիւն Թագաժառանգը եւ Մեծ-Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնա։ Երբ դնացքը կանգ առաւ, Նոցա Մեծութիւնները Օդոստափառ Երեխաների հետ դուրս եկան վագոնից՝ Մեծ-Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչի, Հեսսենեան Մեծ-Դուքսի եւ Նրանց Ամուսինների ուղեկցութեամբ։ Նոցա Մեծութիւնները ողջունելով Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնային եւ Օդոստափառ աղջկանները, անցան միւս դիմաւորողներին եւ արժանացրին նրանց ողորմած խօսքերի։ Անցնելով կայսերական սենեակների միջով, Նոցա Մեծութիւնները ուղեւորվեցին դէպի Կազանեան մայր-եկեղեցին, որտեղ Նոցա Մեծութիւններին դիմաւորեց միտրոպոլիտ Անտոնի։ Կազանեան մայր-եկեղեցում Նոցա Մեծութիւնները բարեհաճեցին համբուրել հրաշագործ պատկերները։ Անտոնի միտրոպոլիտը տաճարում դիմաւորելիս արտասանեց խորապէս զգացված ճառ։ Երբ Նոցա Մեծութիւնները դուրս էին գնում տաճարից, միտրոպոլիտը խաչով եւ հոգեւորականներով դուրս եկաւ սրահը եւ օրհնեց Նոցա Մեծութիւններին սուրբ խաչով։ Ճանապարհին, մայր-եկեղեցուց մինչեւ Զմերային պալատը, կանգնած ժողովրդի բազմութիւնը, զօրքերը եւ աշակերտները թնդացնում էին օդը «ուրայի» ոգեւորված աղաղակներով։ Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհին առոյգ եւ զուարթ տեսք ունեն։ Երեկոյեան տեղի ունեցաւ չքեղ հրավառութիւն. ամբողջ քաղաքում բազմաթիւ զբօսնողներ կան։ Եղանակը գեղեցիկ է եւ տաք։

Յունվարի 13-ին, Զմերային պալատի Կոնցերտային դահլիճում, Թագաւոր Կայսրի եւ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի Բարձրագոյն ներկայութեամբ, տեղի ունեցաւ նոր դրօշակի ամրացումն, որ Բարձրագոյն նուիրված է ծովային կադետների կորպուսին՝ նրա երկուհարիւրամեայ յոբելեանի առիթով։

Ժամի 4-ին Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա այցելեցին Կայսերական Տան դամբարանը Պետրոպաւլօվսկի տաճարում։

Այսօր վախճանվեց յայտնի Նկարիչ, գեղարուեստական ակադեմիայի պրոֆէսօր Շարլէման։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Երէկ ճանապարհ ընկաւ երկաթուղային մի գնացք Կիտչէների եւ նշանաւոր չափով զօրքերի հետ դէպի Միդդլբուրգ։ Գնացքի առաջից գնացող զրահապատ շոքեկառքը դինամիտով դուրս գցվեց ճանապարհից Բալմորալի մօտ։ Երբ շուտով գնացքը հասաւ այդ տեղին, այնտեղ երեւացին շատ բօէրներ, որոնք եւ կրակ բաց արին։ Անգլիական զօրքերը իսկոյն դիրք բռնեցին, նոյնպէս կրակ բացին եւ հալածեցին թշնամուն, որը կորուստներ ունեցաւ, այն ինչ անգլիացիները ոչ մի կորուստ չունեցան։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բօէրները պայթեցրին երկաթուղային կամուրջը Ֆուրտենստրէմի մօտ եւ գրաւեցին զինուորական գնացքը։

ԼՕՆԴՕՆ։ Հնդկական գործերի ստատս-սեկրետարը հեռագիր ստացաւ փոխարքայից, յունվարի 11-ից, որի մէջ ասված է, թէ ձմերային անձրեւները այս տարի աւելի էին, քան սովորաբար լինում են, Հնդկաստանի բարձրաւանդակներում, Բաջպուտանի չրջանում եւ միջին Հնդկաստանի կենտրոնական նահանգներում։ Այս հանգամանքը խոստանում է շատ լաւ ներգործութիւն ունենալ երկրի գիւղատնտեսութեան վրա։ Դէկանում, Կարտանկում եւ Բոմբէյեան չրջանում, անձրեւների պակասութեան պատճառով, հունձի վրա մեծ յոյս չունեն. երկիւղ են կրում, որ օգոստոսից առաջ կը տիրէ մեծ սով։ Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել օգնութեան հասնելու համար։ Այս նպատակով առաջիկայ տարվայ ելեւմուտի նախահաշուի մէջ նշանակված է 10 միլիոն ռուբլի։

ԼՕՆԴՕՆ։ Ինչպէս հաղորդում են առաւօտեան լրագիրներին, Թագաւորը նշանակում է Վիլհէլմ կայսրին անգլիական զօրքի ֆելդմարշալ, ի նշան երախտագիտական չնորհակալութեան նրա սիրոյ դէպի հանգուցեալ Թագուհին եւ դէպի գերմանական այրի կայսրուհին։

ԼՕՆԴՕՆ։ Լուրերին նայելով՝ արաքին գործերի մինիստր մարկիզ Լանսդաուն, իր այսօրվայ զեկուցումը Թագաւորին անելիս, կը ներկայացվի գերմանական կայսրին. այսուամենայնիւ ունկնդրութիւնը կունենայ լոկ ծիսական բնաւորութիւն. արտաքին քաղաքականութեան հարցերը հազիւ թէ չօշափվեն այստեղ։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Քսան հոգի նոր հաւաքված ոստիկաններից անձնատուր եղան բօէրներին Դէվանդէլում, ոչ մի ընդդիմութիւն ցոյց չը տալով։

14 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է Բարձրագոյն հրովարտակ յանուն Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչի, ծովային կօրպուսի 200-ամեայ յօբելեանի առիթով։ Մեծ Իշխանին չնորհվում են Ալէքսանդր III եւ Նիկոլայ II Կայսրների ադամանդազարդ պատկերները։ Եպանչինին չնորհված է ս. Ալէքսանդր Նեվսկու շքանշանը։

Պաշտօնապէս. Գեներալ Զիչագով, տեղեկութիւն ստանալով, որ 40 վերստ Նինգուտիից հեռու գտնվում է 200 հոգուց բաղկացած խունխուզների մի աւազակային խումբ, ուղարկեց նրան ոչնչացնելու համար գնդապետ Ալիխանովին մի զօրաբաժնով, որ բաղկացած էր արգունեան գնդի մի հարիւրեակից, 11-րորդ հրացանաձիգ գնդի 2 բօտաներից եւ կամաւորների զօրախմբից եւ երկու հեծեալ-լեռնային թնդանօթներից։ Կամաւորների զօրախումբը, հեծնելով արգունեան գնդի սայլախմբի ձիերը, արգունեան գնդի առաջին բօտայի հետ միասին, հասան խունխուզներին 60 վերստ Նինգուտիից հեռու, լեռնային հովիտներից մէկի մէջ։ Ինքնապաշտպանութեան համար խունխուզները գրաւեցին երեք, փոխադարձաբար հրակոծվող, ֆանդա-

ներ եւ յաջառութեամբ պաշտպանվում էին մինչեւ կէսօր։ Թնդանօթային նախապատրաստութիւնից յետոյ, Ալիխանովի զօրաբաժինը սուլիններով յարձակվեց Թշնամու վրա եւ կարճատեւ ձեռնակուից յետոյ ոչնչացրեց այդ ֆանդաների բոլոր պաշտպանողներին։ Այսպիսով խունխուզների ամբողջ աւազակային խումբը կոտորվեց։ Սպանվածների մէջ գտնված է խունխուզ Վանչանտին, որ ահ ու սարսափ էր գցել Նինգուտիի շրջանի խաղաղ չինացիների վրա։ Մեզանից վիրաւորված են երեք հրացանաձիգներ եւ մի թնդանօթաձիգ։

ՄԻԼԱՆ։ Վախճանվեց կոմպոզիտոր Վերդի։

ՏԵԱՆՋԻՆ։ Եաղօնական արշաւախումբը դուրս եկաւ Պեկինից դէպի Շանսի. արշաւանքի նպատակը գաղտնի է պահվում։

ՆԻՇ։ Սկուպշչինան ընդունեց Գինիչ պատգամաւորի առաջարկութիւնը, որով կառավարութիւնը լիազորութիւն է տալիս սկուպշչինային ներկայացնել մի օրինագիծ Մայդօմպոկի հարաւ-արեւմտեան կողմում գտնվող պետական հանքերը Ալէքսանդր թագաւորին, իբրեւ սեփականութիւն, տալու վերաբերեալ. ի նշան սերբական ժողովրդի շնորհակալութեան նրա մատուցած ծառայութիւնների համար։

ԿԻՄԲԵՐԼԷՑ։ Ապրանքատար գնացքը պատերազմական պաշարեղէնով, որ ուղարկվում էր հիւսիսում գտնվող զօրքերին, գրաւված է բօէրներից։ Սկզբում բօէրները գերի վերցրին դուբլինեան հրացանաձիգների մի պահակախումբ, եւ յետոյ, յարձակումն գործելով գնացքի վրա դարան մտած տեղից, վերցրին նրան. հետեւեալ գնացքի մեքենայապետը յետ չարժեց գնացքը եւ աջողութեամբ յետ դարձաւ։ Գրաւված գնացքը հալածելու համար՝ ուղարկված է զրահապատ գնացք 200 հետեւակներով։

ԲԵՐԼԻՆ։ Բէյլստագում Բիւլով յայտնեց, որ կառավարութիւնը վճռել է միջնորդել գաշնակցական խորհրդի եւ բէյլստագի առաջ դիւղատնտեսական արդիւնքների մաքսային սակագների այնպիսի աւելացման մասին, որ բաւականաչափ համապատասխանէր գործերի այժմեան դրութեան։

15 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է Բարձրագոյն հրաման ֆինանսների մինիստրի անունով. «Համապատասխան համարելով պետական 4%-աբեր բենտա ունեցող օտարերկրացիներին դնել հաւասար պայմանների մէջ ռուսական պետական, արտասահմանեան շուկաներում շրջանառութեան մէջ գտնվող այն փոխառութիւնների տէրերի հետ, որոնց տոկոսները ենթարկված են հարկի, հրամայում ենք սահմանել եւ յայտարարել ի տեղեկութիւն ընդհանուրի այնպիսի պայմաններ, որոնցով պետական 4%-աբեր գրաւթղթերը, որոնք պատկանում են Ռուսաստանում չապրող օտարահպատակներին, ազատվեն դրամական կապիտալներից վերցվող տուրքից»։

Յունվարի 14-ին, ծովային կադէտների կօրպուսի 200-ամեայ գոյութեան յօբելեանի առիթով, Բարձրագոյն ներկայութեամբ ինժեներական ամրոցի մանեժում տեղի ունեցան ծովային կադետների կօրպուսին նոր շնորհված դրօշակի օրհնութիւնը եւ զօրահանդէսը։ Երեկոյեան 7 ժամին ծովային կադետների կօրպուսի սեղանատանը տեղի ունեցաւ յօբելեանական ճաշ։

ԼՕՆԴՕՆ։ Էդուարդ թագաւորը նշանակեց Վիլհելմ կայսրին մեծ-բրիտանական զօրքի ֆելդմարշալ. առաւօտեան Կօնաուտեան գուքսը մատուցեց կայսրին ֆելդմարշալի գաւազանը։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Սանիտարական խորհուրդը պակասեցրեց Զմիւռնիայից եկած ապրանքների եւ ճանապարհորդների կարանտինը մինչեւ 6 օր։

ԼՕՐԷՆՑՕ-ՄԱՐԿԵԶԷ։ Բրիտանական կառավարութիւնը գնեց Մօնտէ եղբայրների այստեղի ֆիրմայի տունը։ Ասում են, թէ այդ տունը ձեռք է բերված կառավարական հիմնարկութիւնները այնտեղ զետեղելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ նրա ատեանում ցերեկվայ 12 ժամին, այս յունվարի 23-ին, աճուրդ է նշանակված երկու քարէ բարակներ կառուցանելու համար Թիֆլիսի 7-դ քաղաքամասում 28,138 ր. 43 կ. գումարի։

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագրերը եւ յատակագծերը Վարչութեան Շինարարական բաժնում ամեն օր, ցերեկվայ 9-ից մինչեւ 3 ժամը։ 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ նրա դիւանատանը 1900 թ-ի յունվարի 25-ին, կէսօրվայ 12 ժամին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Գօլովինսկի պրոսպէկտի վրա գտնվող քաղաքային, նախկին Շիսելի, տան մէջ եղած խանութները եւ ներքնայարկում գտնվող սենեակները։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Վարչութեան 4-րդ բաժանմունքում բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչեւը 3-ը։ 3—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Թագուհի Փանոսեանի քարվանսարան, Հաւլաբարում, Կախետինսկայա փողոցում, Թիֆլիսի գնդի կազարմաներին կից։ Հողի քանակութիւնն է 1442 քառակուսի սաժէն։

Պայմանների մասին կարելի է տեղեկանալ Փանոսեանի տանը, Միխայլովսկայա եւ Սեմենովսկայա փողոցների անկիւնում, ամենայն օր, երեկոյեան ժամի 4—6։ 2—4

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՌՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ս. ՊԵՏԵՐՍԵԱՆԻ

Աշակերտները պատրաստվում են գիմնազիայի բէալական եւ այլ դպրոցների համար։
Баку, Полицейская. 2—5

ՄԷՐՎԻ ԱՂՕԹԱՏԱՆ ՀԱՄԱՐ

հարկաւոր է ճեմարանը կամ մի որ եւ է թեմական դպրոց աւարտած քահանայացու, հնուտ լաւ երգեցողութեան, յաջողակ ձայնով, տարեկան 1200 բուբլուց մինչեւ 1500 ր. արդիւնքով։ Ցանկացողներից խնդրվում է դիմել Երէցփոխ՝ լուսանկար Ատ... ոս Նազարեանցին։ 6—6

Պետերբուրգի պարսից դեսպան Միրզա-Ռիզա-խանի տանը, Գուդովիչի փողոցի վրա,
ՏՐՎՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՎԱՐՁՈՎ

ամիսն եւ ներքին յարկերում, առաջինը տասն սենեակներից բաղկացած, երկրորդը՝ տասնմէկ։ Գնի մասին դիմել Հաջի-Մամէդ-Բաղր Ռիզաեվին, Սիմոնի փողոցի վրա, Զիմախովի քարվանսարայում։ (Ե. Հ. Չ.) 10—10

ԲԱՑԿԱՊԵՏ
ԳԷՈՐԳ ԹԱԴԷՈՍԻԱՆ

Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։ Ընդունում է հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օրից) 5—7 ժ.։ Վելիամինովսկայա փողոց, տ. № 24։ (Ե. Չ. Չ.) 19—20

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր մի ...

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Մատնվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սբ. Սանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Միքայէլեան կամուրջի վրա, Զապօվի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 41—100

24—33 (Ա.)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Հատոր առաջին։—XVI—XVII դար

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ

Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 1—10

Открыта подписка на 1901 годъ.
ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ
(26-й годъ изданія).

„Тифлисскій Листокъ" и въ 1901 году будетъ выходить ежедневно по прежней программѣ газеты литературной, общественной и политической.

Будетъ обращено особое вниманіе на развитіе отдѣла корреспонденцій изъ разныхъ мѣстъ Закавказья.

Въ теченіе года подписчики получатъ не менѣе 12-ти литературныхъ приложеній, въ которыхъ будутъ помѣщаться статьи по кавказовѣдѣнію, повѣсти, разказы, стихотворенія и пр.

Время отъ времени приложенія будутъ иллюстрироваться портретами и рисунками.

По понедѣльникамъ подписчикамъ будутъ разсылаться телеграммы.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Въ Тифлисѣ: на годъ—5 руб., на 6 мѣс.—3 р., на 3 мѣс.—1 р. 75 к. и на 1 мѣс.—75 к.
Для иногородныхъ: на годъ—7 руб., на цолгода—4 руб., на 3 мѣсяца—2 руб. 50 коп. и на 1 мѣс.—1 руб.

На всѣ указанные сроки подписка принимается съ перваго числа каждаго мѣсяца.
Разсрочка и подписка на другіе сроки не допускается.
Посписка принимается **исключительно** въ конторѣ изданія:
Тифлисъ, Головинскій, № 3. 1—3

„ՇԱԹԱՑ"
ՆԱԽԹԱՐԴԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն փայատէրերի եւ փայեր ձեռք բերել ցանկացողների, որ ամսիս 21-ին վերջնականապէս լրանում է փայերը բաց թողնելու ժամանակը։

Նոր փայեր ձեռք բերել ցանկացողները պէտք է մտրնեն 15-ական բուբլի իւրաքանչիւր փայի համար ընկերութեան գրասենեակը, Երեւանեան հրապարակ, տուն Խարազեանի բակում։ 1—5

Յունվարի 20-ից Թիֆլիսում
ԲԱՑՎՈՒՄ Է ՆՈՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի հասակաւոր անձանց համար

Պարտադիր առարկաներն են.—1) տեխնօլոգիա, 2) հաշւապահութիւն, 3) ապրանքագիտութիւն, 4) թղթակցութիւն, 5) թուաբանութիւն հաշւարարով, 6) առեւտուր, 7) առեւտրական թուաբանութիւն, 8) գեղագրութիւն, 9) առեւտրական օրէնքներ, 10) բանկային գործ։ Անպարտադիր առարկաներ.—օտար լեզուներ եւ ուղղագրութիւն։

Հաշւապահական կուրսերն ընդունվում են երկու սեռի անձինք ոչ պակաս 15 տարեկանից, որոնք աւարտել են ուսման ընթացքը կամ քաղաքային դպրոցներում կամ դուրս են եկել միջնակարգ դպրոցների 3-րդ դասարաններից եւ կամ ընել են համապատասխան քննութիւն։ Պարապմունքները բաժանված են կիսամեակների։ Ամբողջ դասընթացքի վճարը 60 բուբլի է։ Ընդունելութեան խնդիրները ընդունվում են ամեն օր կուրսերի դիւանատանը, Միքայէլեան պրոսպէկտի վրա, № 56 կամ հիմնադրի բնակարանում, Միքայէլեան փող, № 71։

2—10 Հիմնադիր կուրսերի՝ Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԵՆՆԵՐ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ,
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօթս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 17/30 յունվարի—շոգենաւ՝ ՄԻՆԳՐԵԼԻ, կապիտան Ռ.ԵԼՏ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են տեղորակ անից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիմոնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍԻՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակատարութիւն։ 19—20

ՌՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՈՒՆԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆ, ՈՐՈՆՔ ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ԵՒ ՐԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՆ։

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ աշակերտներ գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադետների կօրպուսի մինչեւ հինգերորդ դասարան, նոյնպէս առեւտրական, երկրաչափական եւ այլ ուսումնարանների համար։

Առաջին բաժանմունքում երեխաներ ընդունվում են առանց քննութեան։

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսում ստացած հնուտ մանագէտ մանկավարժներ։

Նոյն տեղը ընդունվում են ուրիշ ուսումնարանների աշակերտներ թէ ապրելու եւ թէ դասեր ուսանելու համար։

Հասցէն՝ Թիֆլիս, Գանօվսկայա, № 11 (երրորդ գիմնազիայի մօտ)։ 3—5

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Января 1901 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27